

Գլխավոր տեղեկություն	
Номер	N 300-Ն
Տիպ	Հրաման
Тип	Официальная Инкорпорация (25.09.2024-24.01.2025)
Статус	Գործում է
Первоисточник	ՀՀԳՏ 2017.02.15/6(575) Հոդ.76
Принят	Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Дата принятия	30.12.2016
Подписан	Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Дата подписания	30.12.2016
Дата вступления в силу	01.01.2018

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
6 փետրվարի 2017 թ.
Պետական գրանցման թիվ 12417066

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՆՏԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

30 դեկտեմբերի 2016 թ.

N 300-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ԵԿԱՄՈՒՆՏԵՐԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ (ՊԱՐԶԵՑՎԱԾ) ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՆՏԵՐԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ), ՏԵՐԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՐԵԿԱԼԵԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(վերնագիրը փոփ. 18.12.17 N 425-Ն, խմբ. 01.12.23 N 1267-Ն)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասը և 156-րդ և 157-րդ հոդվածները՝
(նախաբանը փոփ. 18.12.17 N 425-Ն)

Հրամայում եմ՝

- Հաստատել՝
 - եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկի ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,
 - եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական պարզեցված հաշվարկի ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի,
 - եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի,
 - ֆիզիկական անձանց եկամուտների և եկամտային հարկի տեղեկությունների ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:
 - կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, ՆՈՒՄԻ) կողմից ֆիզիկական անձանց հաշվարկված և վճարված եկամուտների, պահված եկամտային հարկի և սոցիալական վճարի մասին տեղեկանքի ձևը և լրացման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի:
- Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների վրա:

4. Հարությունյան

Հավելված N 1
ՀՀ կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
2016 թվականի դեկտեմբերի 30-ի
N 300-Ն հրամանի

ՀԱՇՎԱՐԿ ԵԿԱՄՈՒՆՏԵՐԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ (տարի) _____ (ամիս) _____	
Հարկ վճարող	
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	

1. «Հարկ վճարող» տողում ինքնաշխատ լրացվում է կազմակերպության անվանումը և կազմակերպատիրական ձևը (անհատ ձեռնարկատիրոջ կամ ՆՈՒՄԻ անունը, ազգանունը), իսկ «Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)» տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

Բաժին I. Գործատուի եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկ՝ ըստ աշխատողների
(բաժինը խմբ. 12.05.20 N 405-Ն)

Աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) նույնականացման տվյալներ					Հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա (ստացված) եկամտի գումար				Վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստներ		
Ազգանուն	Անուն	Հան-րային ծառա-յությունների համա-րանիշ (ՀԾՀ)	Զբաղ-մունքների դա-սակարգ-ի կոդ	Կուտա-կային կենսա-թոշակա-յին հա-մակար-գի մաս-նակցու-թյան կարգա-վիճակ	Աշխա-տա-վարձ և դրան հա-վա-սա-րեց-ված այլ վճա-րում-ներ	Քաղա-քացիա-իրա-վական պայմա-նագրով աշխա-տանքի վարձա-տրու-թյուն	Այլ հարկման բազա (բացի նպաստ-ների)	Հարկ-ման բազա-յի նը վազեց-ման գումար	Գործա-տուի միջոց-ներով վճար-ված նպաստ-ների գումար	ՀՀ պետա-կան բյուջեի միջոց-ներով վճար-ված նպաստ-ների հետ-պահում	Ավելի վճար-ված նպաստի գումարի
1.1	1.2	1.3	1.4	1.5	1.6	1.7	1.8	1.9	1.10	1.11	1.12
								()			
								()			
								()			

Բաժին 1.1 Դատարանի վճիռն հիման վրա կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով վճարված եկամուտ

2. 1-ին բաժնում տրվում է հաշվետու ամսվա համար հարկային գործակալի (գործատուի) եկամտային հարկի և սոցիալական վճարների հաշվարկը՝ ըստ բոլոր (վարձու) աշխատողների, յուրաքանչյուր (վարձու) աշխատողի համար լրացվում է մեկ տող (անկախ հաշվետու ամսում եկամուտներ ստանալու հասցեամանքի):

3. [1.1], [1.2] և [1.3] սյունակներում ինքնաշխատ լրացվում են (վարձու) աշխատողի նույնականացման տվյալները. [1.1] և [1.2] սյունակներում՝ (վարձու) աշխատողի ազգանունը և անունը. [1.3] սյունակում՝ հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը):

4. [1.4] սյունակում ինքնաշխատ լրացվում է (վարձու) աշխատողի զբաղմունքի (պաշտոնի, մասնագիտության) կոդը. [1.5] սյունակում ինքնաշխատ լրացվում է կուտակային կենսաթոշակային համակարգում (վարձու) աշխատողի մասնակցության կոդը (1՝ սոցիալական վճար կատարող չէ, 2՝ սոցիալական վճար կատարող է, 3՝ դիմումից հիման վրա սոցիալական վճար կատարող է):

5. [1.6] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար վարձու աշխատողին հաշվեգրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները. [1.7] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքի կատարման) դիմաց աշխատողին հավաստի վճարված եկամուտները (պայմանագրային եկամուտը). [1.8] սյունակում նշվում է (վարձու) աշխատողին վճարված [1.6] և [1.7] սյունակներում չընդգրկված և հարկման բազայի ամսական սանդղակի (այսուհետ՝ սանդղակ) դրույքաչափերով հարկվող այլ եկամուտները (այդ թվում է՝ օրենսդրությամբ սահմանված չափից գերազանցող առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները, աշխատողների <Հ օրենսդրությամբ սահմանված չափերից ավելի վճարված փոխհատուցման վճարները, աշխատողին վճարված օգնության գումարները), [1.9] սյունակում նշվում է հարկման բազայի <Հ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չափերը չգերազանցող կամավոր կենսաթոշակային վճարների գումարները՝ ոչ ավել, քան $(1.6) + [1.7] + [1.8] + [1.10] + [1.11]$: $(1.6) + [1.7] + [1.8] + [1.10] + [1.11]$: 0.05:

6. [1.10] սյունակում նշվում են հաշվետու ամսում գործատուի փնջոցներով վարձու աշխատողին վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները. [1.11] սյունակում նշվում են հաշվետու ամսում <Հ պետական բյուջեի փնջոցներով վարձու աշխատողին վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները. [1.12] սյունակում նշվում են հաշվետու ամսում հիդիության և ծնողաբերության արձակուրդի ընդհատվելու դեպքում վճարված նպաստի վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստի հետապահվող գումարները: Յուրաքանչյուր վարձու աշխատողի համար նշված սյունակներից որևէ մեկը լրացված լինելու դեպքում լրացվում (բացվում) է հետևյալ աղյուսակը՝

Աշխատողի ազգանուն, անուն	Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)	Նպաստների և հետպահման դասակարգման կոդ	Ժամանակավոր անաշխա- տունակության (հետպահման)		Նպաստի գումար կամ հետպահվող գումար		
			սկիզբ (օրը)	ավարտ (օրը)	Գործատուի միջոցներով	ՀՀ պետական բյուջեի միջոցներով	Հետ պահվող գումար
Ընդամենը							

7. «Նպաստների դասակարգման կողք» սյունակում նշվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստների տեսակը կամ հետպահման դեպքը (կողք)։ 1 - հիվանդության նպաստ, 2 - պրոթեզավորման նպաստ, 3 - առողջարանային բուժման նպաստ, 4 - հիղիության և ծննդաբերության նպաստ, 5 - ընտանիքի հիվանդ անդամի ինսուլմի նպաստ, 6 - ավելի վերաբերված նպաստի գումարի հետպահումը։

8. «Ժամանակավոր անաշխատունակության (հետպահման) / սկիզբը (օրը)» և «Ժամանակավոր անաշխատունակության (հետպահման) / ավարտը (օրը)» սյունակներում նշվում են ժամանակավոր անաշխատունակության կամ հետպահման ժամանակահատվածը, ընդ որում՝ եթե գործատուն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Կ որոշման 5-րդ հավելվածի 9-րդ կետով սահմանված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա (բացառյալում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի վերջը), ապա որպես ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի վերջ լրացվում է յուրաքանչյուր անգամ ժամանակավոր անաշխատունակության թերթիկի գործատուին ներկայացնելու օրը՝ առանց փոփոխելու ժամանակավոր անաշխատունակության սկիզբը։

9. «Նպաստի գումարը կամ հետպահվող գումարը» սյունակում նշվում է հաշվետու ամսում ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարված գումարը կամ հաշվետու ամսում հիղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստի վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստի հետպահվող գումարները։

10. [1.13] սյունակում լրացվում է հաշվետու ամսում (վարձու) աշխատողի [1.6], [1.7], [1.8], [1.9], [1.10] և [1.11] սյունակներում նշված եկամուտներից օրենսդրությամբ սահմանված կարգով և դրույքաչափերով հաշվարկված եկամտային հարկի գումարը։

11. [1.14] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում (վարձու) աշխատողի [1.6] և [1.7] սյունակներում նշված եկամուտների հանրագումարից օրենսդրությամբ սահմանված չափերով հաշվարկված սոցիալական վճարի գումարը։

12. [1.15] սյունակում նշվում է հաշվետու ամսվա ընթացքում աշխատողի փաստացի աշխատած ժամերի քանակը

13. Բաժին 1.1-ում քառ տողերի հարկային գործակալի կողմից անձնավորված լրացվում են դատարանի վճռի հիման վրա կամ ՀՀ շեմքով սահմանված այլ հիմքերով վճարված աշխատավարձը, պայմանագրային եկամուտը, ժամանակավոր անաշխատունակության նպաստը և այլ եկամուտը։ [1.16] տողում լրացվում են օրենսդրությամբ սահմանված սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության ներքո գտնվող անձանց վերաբերյալ ամփոփ (ոչ անձնավորված) տվյալները։

Նշված բաժնում լրացված յուրաքանչյուր տողը (բացառությամբ [1.16] տողի) լրացված ինելու դեպքում լրացվում (բացվում) է հետևյալ աղյուսակը՝

Ֆիզիկական անձի ազգանուն, անուն	Հանրային ծառայությունների համարակիշ (ՀԾՀ)	Վճարված եկամտի դասակարգման կոդ	Հարկադիր պարագուրդի		Աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերության		Ժամանակավոր անաշխատունակության	
			սկիզբ (օրը, ամիսը, տարին)	ավարտ (օրը, ամիսը, տարին)	սկիզբ (օրը, ամիսը, տարին)	ավարտ (օրը, ամիսը, տարին)	սկիզբ (օրը, ամիսը, տարին)	ավարտ (օրը, ամիսը, տարին)

14. «Վճարված եկամտի դասակարգման փորձ» սյունակում նշվում է եկամտի վճարման հիմքը (կողը)։ 1 - դատարանի վճռի հիման վրա աշխատանքի վերականգնման դեպքում հարկադրյալ պարտավորողի վճարում, 2 - դատարանի վճռի հիման վրա նպաստի վճարում, 3 - դատարանի վճռի հիման վրա այլ եկամտի վճարում, 4 - նախորդ հաշվետու ժամանակահատվածներում ավարտված քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքի կատարում) դիմաց եկամտի վճարում, 5 - նախորդ հաշվետու ժամանակահատվածներում աշխատանքից ազատված աշխատողին աշխատավարձ և դրան հավասարեցված եկամտի վճարում, 6 - նախորդ հաշվետու ժամանակահատվածներում աշխատանքից ազատված աշխատողին հարկման բազա հանդիսացող այլ եկամտի վճարում։

15. [1.17] տողում ինքնաշխատ լրացվում են [1.6]-ից մինչև [1.15] սյունակների հանրագումարները, ընդ որում [1.18] և [1.19] տողերում լրացվում են՝ համապատասխանաբար, պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքի կառնադրության գումարները։

15.1. [1.20] տողում լրացվում է հաշվարկի ներկայացման օրվա դրությամբ գործառույթի (բացառությամբ պետական կառավարչական հիմնարկների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և պետական ոչ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների) մոտ առկա թափուր աշխատատեղերի թվաքանակը։

Բաժին II. Հարկման բազա հանդիսացող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկ

Եկամտի և քաղաքացիության կոդ	Եկամտի ընդհանուր գումար	Դրույքաչափ (%)	Եկամուտները ստացողների թվաքանակ	Եկամտային հարկի գումար
2.1	2.2	2.3	2.4	2.5
Օրինակ				

16. 2-րդ բաժնում տրվում է հաշվետու ամսում տվյալ հարկային գործակալի կողմից բոլոր ֆիզիկական անձանց վճարված հարկման բազա հանդիսացող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկը, յուրաքանչյուր եկամտի տեսակի և քաղաքացիության համար լրացվում է մեկ տող, ընդ որում՝

1) 2020 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակահատվածներին վերագրվող (այդ հաշվետու ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձ հանդիսացող մասնակցի ստացած շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 5% դրույքաչափով,

2) 2023 թվականի հունվարի 1-ից հետո տոկոսների (բացառությամբ բանկային ավանդի և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանը առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց տոկոսների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10% դրույքաչափով:

(16-րդ կետը խմբ. 17.09.19 N 604-Ն, 16.12.22 N 1320-Ն)

17. [2.1] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար [2.2] սյունակում նշված եկամտի և եկամուտ ստացողների քաղաքացիության կողմ (ՀՀ քաղաքացի կամ օտարերկրացի՝ օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ), [2.2] սյունակում լրացվում է հաշվետու ամսվա համար հաշվեգրված այլ եկամտատեսակների գումարները (որոնք հարկվում են առանձին դրույքաչափերով), [2.3] սյունակում նշվում է ընտրված եկամտին և քաղաքացիության կողմից համապատասխանող եկամտային հարկի դրույքաչափը, [2.4] սյունակում նշվում է [2.2] սյունակում նշված եկամուտներ ստացողների թվաքանակը (հաշվարկում չի մասնակցում) և [2.5] սյունակում լրացվում է եկամտային հարկի գումարը:

Եկամտի տեսակ	Եկամտի կոդ	Դրույքաչափ	Եկամտի կոդ	Դրույքաչափ
	ՀՀ քաղաքացի		Օտարերկրացի	
1. Ռոյալթի	001	10%	101	10%
2. Տոկոս	002	ընդհանուր սահմանված դրույքաչափ (10%)	102	ընդհանուր սահմանված դրույքաչափ (10%)
3. Շահում	003	ընդհանուր սահմանված դրույքաչափ	103	ընդհանուր սահմանված դրույքաչափ
4. Մրցանակ	004	ընդհանուր սահմանված դրույքաչափ	104	ընդհանուր սահմանված դրույքաչափ
5. Նվիրատվություն	005	ընդհանուր սահմանված դրույքաչափ	105	ընդհանուր սահմանված դրույքաչափ
6. Արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարումից եկամուտ	006	20%	106	20%
7. Գույքն (բացառությամբ սույն աղյուսակի 6-րդ և 8-րդ տողերում նշվածի) օտարելու դիմաց եկամուտ	007	10%	107	10%
8. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող կառուցապատող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարումից ստացված եկամուտ	008	20%	108	20%
9. Վարձավճար	009	10%	109	10%
10. Շահաբաժիններ	010	5%	110	5%(10%)
11. Ֆիզիկական անձի համար ապահովագրավճար	011	ընդհանուր սահմանված դրույքաչափ	111	ընդհանուր սահմանված դրույքաչափ
12. Կամավոր կենսաթոշակներ	012	10%	112	10%
13. Չիմնավորված վճարումներ	013	20%	013	20%
14. Եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածում չվճարված պասիվ եկամուտներ	014	20%	114	20%
15. ՀՀ-ում կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի աշխատանքային պայմանագրով աշխատանքի կատարման դիմաց հաշվարկված եկամուտ	x	x	115	ընդհանուր սահմանված դրույքաչափ
16. ՀՀ-ում կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) դիմաց վճարված եկամուտ	x	x	116	ընդհանուր սահմանված դրույքաչափ
17. Այլ եկամուտներ	099	ընդհանուր սահմանված դրույքաչափ	199	ընդհանուր սահմանված դրույքաչափ

(աղյուսակը փոփ. 17.09.19 N 604-Ն, 16.12.22 N 1320-Ն)

Բաժին III. Ամփոփ տվյալներ

Եկամտային հարկի գումար (հաշվարկված)	Եկամտային հարկից նվազեցվող նպաստների գումար (վճարված)	Ավելի վճարված նպաստների գումարների հետպահում	Եկամտային հարկ (վճարման ենթակա)	Սոցիալական վճարներ (վճարման ենթակա)
3.1	3.2	3.3	3.4	3.5
	()			

ինքնաշխատ ($[3.5]=[1.14]$) լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա սոցիալական վճարի վճարման ենթակա գումարը:

ստորագրությունը, անունը, ազգանունը

Հավելված N 2
ՀՀ կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
2016 թվականի դեկտեմբերի 30-ի
N 300-Ն հրամանի

1. Սույն մատույն լրացվում էն Ֆիդիկական անձի նույնականացման տվյալները, «Ազգանուն» և «Մնուն» տողերում՝ աշխատողի ազգանունը և անունը, «Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՀՀՀ)» տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, «Հանրային ծառայությունների համարանիշը (ՀՏՀ)» տողում՝ աշխատողի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշը չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը), «Վանդ հաստատող փաստաթղթի տեսակ» և «Ներիյա և համար» տողերում՝ համապատասխանաբար ընթացիկատ լրացվում է ՀՀ-ում անձն հաստատող փաստաթղթի տեսակներին դրևել սելց՝ ՀՀ քաղաքացիների համար էՀ անձնակաղ, նույնականացման քարտ, միլևել 16 տարբերակների դեպքում՝ ծննդյան վկայական, օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ ՀՀ-ում բնակվելու իրավունք հաստատող փաստաթուղթ (կազմողան քարտ, ՌԴ քաղաքացու դեպքում՝ ՌԴ քաղաքացու անձնակաղ), փախտատականի կարգավիճակ ունեցող անձի՝ կուկենցիոն ճամփորդական փաստաթուղթ և անձն հաստատող համապատասխան փաստաթղթի սերիան և համարը:

[illegible]

ստորագրություն, անուն, ազգանուն

Հավելված N 3
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
Նախագահի 2016 թ. դեկտեմբերի 30-ի
N 300-Ն հրամանի

ՀԱՅԷԱՐԿ (ՀԱՅՏՏԱՐԱՐԱԳԻՐ) ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԻ (տարի)	
1. Ազգանուն, անուն, հայրանուն	
2. Հանրային ծառայությունների համարանիշ (ՀՏՀ)	
3. Կապակցության հասցե	

(ՀՎՀՀ)	
4. Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցության կարգավիճակ	
5. Բնակության (հաշվառման) հասցե	
6. Հեռախոսահամար	

- Հաշվարկի (հայտարարագրի) առաջին մասում լրացվում են ֆիզիկական անձի տվյալականացման տվյալները: Ընդ որում՝
 - 1-ին կետում լրացվում է ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը: Հաշվարկի (հայտարարագրի) 2-րդ կետը լրացնելու դեպքում 1-ին կետը լրացվում է ինքնաշխատ,
 - 2-րդ կետում լրացվում է ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը),
 - 3-րդ կետում լրացվում է ֆիզիկական անձի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),
 - 4-րդ կետում լրացվում է ֆիզիկական անձի կուտակային կենսաթոշակային համակարգում մասնակցության կողը (կողը 1` եթե ֆիզիկական անձը սոցիալական վճար կատարող չէ, կողը 2` եթե ֆիզիկական անձը սոցիալական վճար կատարող է, կողը 3` եթե ֆիզիկական անձը դիմումի հիման վրա սոցիալական վճար կատարող է),
 - 5-րդ կետում լրացվում է ֆիզիկական անձի բնակության (հաշվառման) հասցեն,
 - 6-րդ կետում լրացվում է ֆիզիկական անձի հեռախոսահամարը (առկայության դեպքում):

ԲԱԺԻՆ 1. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻՑ ՍՍԱԳՎՈՐ (ՍՍԱԳՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ ԴԱՐՏԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԱԾ ԳՈՐԾԱՏՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՅՄԱՆԱԳՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒԵՄԱՆ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ) ԶԱՂԱՔԱԳԻՏԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՅՄԱՆԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՍԱԳՎՈՐ (ՍՍԱԳՎԱԾ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ԱՅՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Գլուխ 1. Աշխատանքային պայմանագրերի, ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացվող (ստացված) եկամուտներ և եկամտային հարկ

Եկամտի տեսակ		Հարկային գործակալի (գործատուի)		Ստացվող (ստացված) եկամուտ (դրամ) [1.1.3]	Եկամտային հարկ (դրամ) [1.1.4]
		ՀՎՀՀ [1.1.1]	Մնվանում [1.1.2]		
1. Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	[1.1.5]				x
2. Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի (ծառայության) դիմաց վարձատրություն	[1.1.6]				x
3. Ժամանակավոր անաշխատունակության, մայրության նպաստներ	[1.1.7]				x
4. Աշխատողի այլ եկամուտներ	[1.1.8]				x
5. Աշխատողի հարկման բազայի նվազեցման գումար (կամավոր կենսաթոշակային վճարների գումար)	[1.1.9]				() x
6. Հարկվող եկամուտ	[1.1.10]				
7. Ընդամենը	[1.1.11]	x	x	x	

- Հաշվարկի (հայտարարագրի) 1-ին բաժնում անձնավորված հաշվառման տեղեկատվական համակարգից ինքնաշխատ լրացվում են հաշվետու տարում հարկային գործակալից ստացվող (ստացված) եկամուտները, եկամտային գործակալի պարտականություններից ազատված գործատուից աշխատանքային պայմանագրի, ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացվող (ստացված) եկամուտները, այդ եկամուտներից եկամտային հարկը:
 - Հաշվարկի (հայտարարագրի) 1-ին բաժնի 1-ին գլխում ինքնաշխատ լրացվում են աշխատանքային պայմանագրերի, ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում հարկային գործակալից կամ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուից ստացվող (ստացված) եկամուտները, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստները, այլ եկամուտները և եկամտային հարկը` ըստ հարկային գործակալների (գործատուների): Ընդ որում,
 - [1.1.1] սյունակում լրացվում է հարկային գործակալի (գործատուի) հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),
 - [1.1.2] սյունակում լրացվում է հարկային գործակալի (գործատուի) անվանումը,
 - [1.1.5] տողում լրացվում է աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները,
 - [1.1.6] տողում լրացվում է քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի (ծառայության) դիմաց վարձատրությունը,
 - [1.1.7] տողում լրացվում է ժամանակավոր անաշխատունակության, մայրության նպաստները,
 - [1.1.8] տողում լրացվում է աշխատողի ստացված այլ եկամուտները,
 - [1.1.9] տողում լրացվում է աշխատողի հարկման բազայի նվազեցման գումարը (կամավոր կենսաթոշակային վճարների գումարը, ոչ ավելի, քան (տող [1.1.5] + տող [1.1.6] + տող [1.1.7] + տող [1.1.8]) - (տող [1.1.5] + տող [1.1.6] + տող [1.1.7] + տող [1.1.8]) / 1,05),
 - [1.1.10] տողի [1.1.3] սյունակում լրացվում է յուրաքանչյուր հարկային գործակալից (գործատուից) ստացվող (ստացված) հարկվող եկամուտը, իսկ նույն տողի [1.1.4] սյունակում լրացվում է այդ հարկվող եկամտից եկամտային հարկի գումարը,
 - [1.1.11] տողում լրացվում է հարկային գործակալներից (գործատուներից) ստացված (ստացվող) հարկվող եկամտից եկամտային հարկի գումարների հանրագումարը:

Գլուխ 2. Այլ եկամուտներ և եկամտային հարկ

Եկամտի տեսակ		Հարկային գործակալի		Ստացված եկամուտ (դրամ) [1.2.3]	Եկամտային հարկ (դրամ) [1.2.4]
		ՀՎՀՀ [1.2.1]	Մնվանում [1.2.2]		
1. Ռոյալթի	[1.2.5]				
2. Տոկոս	[1.2.6]				
3. Վարձավճար	[1.2.7]				
4. Շահաբաժին	[1.2.8]				
5.	[1.2.9]				
Նվիրատվություն					
6. Գույքի (բացառությամբ սույն գլխի 7-րդ կետում նշված) օտարումից եկամուտ	[1.2.10]				
7. Կառուցապատողի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարումից եկամուտ	[1.2.11]				
8. Շահում	[1.2.12]				
9. Մրցանակ	[1.2.13]				
10.	[1.2.14]				
Ապահովագրավճար					
11. Կամավոր	[1.2.15]				

Կենսաթոշակ	[1.2.16]				
Եկամուտներ					
13. Ընդամենը	[1.2.17]	x	x	x	

4. Հաշվարկի (հայտարարագրի) 1-ին բաժնի 2-րդ գլխում ներառվում են ֆիզիկական անձի ստացված այլ եկամուտները և եկամտային հարկը՝ ըստ հարկային գործակալների: Ընդ որում,

- 1) [1.2.1] սյունակում լրացվում է հարկային գործակալի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),
- 2) [1.2.2] սյունակում լրացվում է հարկային գործակալի անվանումը,
- 3) [1.2.3] սյունակում լրացվում են տվյալ հարկային գործակալից ստացված եկամուտների չափը ըստ եկամտի տեսակների՝
 - ա. ռոյալթի (տող [1.2.5]),
 - բ. տոկոսներ (տող [1.2.6]),
 - գ. վարձավճար (տող [1.2.7]),
 - դ. շահաբաժին (տող [1.2.8]),
 - ե. նվիրատվության կարգով ստացվող գույք և (կամ) դրամական միջոցներ (տող [1.2.9]),
 - զ. գույքի (բացառությամբ սույն գլխի 7-րդ կետում նշվածի) օտարումից եկամուտ (տող [1.2.10]),
 - ը. կառուցապատողի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարումից եկամուտ (տող [1.2.11]),
 - զ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող՝ գովազդային վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումներ՝ յուրաքանչյուր շահման դեպքում 50 հազար դրամը գերազանցող չափով (տող [1.2.12]),
 - թ. մրցույթներում ստացվող դրամական մրցանակներ յուրաքանչյուր մրցանակի դեպքում 50 հազար դրամը գերազանցող չափով (տող [1.2.13]),
 - ժ. հարկային գործակալների կողմից ֆիզիկական անձանց համար կատարվող ապահովագրավճարներ (տող [1.2.14]),
 - ժա. կամավոր կենսաթոշակային բաղադրիչին մասնակցության շրջանակներում ստացվող կենսաթոշակներ (տող [1.2.15]),
 - ժբ. 1-ին բաժնի 2-րդ գլխի 1-11-րդ կետերում նշված այլ եկամուտներ (տող [1.2.16]),
- 4) [1.2.4] սյունակում լրացվում են [1.2.3] սյունակում նշված եկամուտներից եկամտային հարկի գումարները,
- 5) [1.2.17] տողում (սյունակ [1.2.4]) լրացվում է [1.2.5]-ից [1.2.16] տողերում լրացված եկամուտներից եկամտային հարկի գումարների հանրագումարը:

ԲԱԺԻՆ 2. ՆԱԿԶԵՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նվազեցվող եկամտի տեսակ	Եկամուտ (դրամ)
1. Նպաստներ	[2.1]
2. Կենսաթոշակներ	[2.2]
3. Ապահովագրական հատուցումներ	[2.3]
4. Բանկերից կամ վարկային կազմակերպություններից՝ ապահովագրական հատուցումների հաշվին ստացված գումարներ	[2.4]
5. Պետական բյուջեից ստացվող կուտակային հատկացումների լրացուցիչ միջոցներ	[2.5]
6. Սոցիալական օժանդակություններ	[2.6]
7. Ալիմենտներ	[2.7]
8. Դոնորությունից եկամուտներ	[2.8]
9. Աշխատողների և կամավոր աշխատանք կատարող անձանց փոխհատուցման վճարներ	[2.9]
10. Ժառանգությամբ և (կամ) նվիրատվությամբ ստացվող գույք	[2.10]
11. Անհատույց ստացվող եկամուտներ	[2.11]
12. Գույքի օտարումից ստացվող եկամուտներ	[2.12]
13. Կրթաթոշակներ	[2.13]
14. Վնասի փոխհատուցում	[2.14]
15. Վարկեր և փոխառություններ	[2.15]
16. Շահումները	[2.16]
17. Մրցանակներ	[2.17]
18. Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամից հատուցվող գումարներ	[2.18]
19. ԽՍՀՄ խնայքանկում և ՀԽՍՀ բանկում ներդրած դրամական ավանդների փոխհատուցում	[2.19]
20. Միասնական հաշվից վերադարձման ենթակա գումարների նկատմամբ հաշվեգրվող տույժեր	[2.20]
21. Մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելու գործունեությունից ստացվող եկամուտներ	[2.21]
22. Ինքնավար եներգաարտադրողի ստացվող փոխհատուցումներ	[2.22]
23. Գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումից (իրացումից) ստացվող եկամուտներ	[2.23]
24. Արժեթղթերից եկամուտներ	[2.24]
25. Հատուցման հիմնադրամից ստացվող հատուցումներ	[2.25]
26. Այլ նվազեցվող եկամուտներ	[2.26]
27. Ընդամենը	[2.27]

5. Հաշվարկի (հայտարարագրի) 2-րդ բաժնում լրացվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ տվյալ հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի ստացած նվազեցվող (չհարկվող) եկամուտները: Սույն բաժնում լրացվող եկամուտների վերաբերյալ հարկային մարմնի տեղեկատվական բազայում տվյալների առկայության դեպքում, այդ եկամուտները լրացվում են ինքնաշխատ:

6. Հաշվարկի (հայտարարագրի) 2-րդ բաժնի՝

- 1) [2.1] տողում լրացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ֆիզիկական անձանց ստացվող նպաստների գումարները, բացառությամբ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստների և վարձու աշխատողների ու ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված ֆիզիկական անձանց մայրության նպաստների գումարների,
- 2) [2.2] տողում լրացվում են բոլոր տեսակի կենսաթոշակները (այդ թվում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կուտակային բաղադրիչի շրջանակներում ստացվող կուտակային կենսաթոշակները, այլ պետությունների օրենսդրության շրջանակներում ստացվող կենսաթոշակները և այլ պետությունների կենսաթոշակային ապահովության համակարգի շրջանակներում ստացվող համանման վճարները), բացառությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչին մասնակցության շրջանակներում ստացվող կենսաթոշակները,
- 3) [2.3] տողում լրացվում են ապահովագրական հատուցումները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող լրացուցիչ միջոցները, գործատուի) կողմից կատարվող կամավոր կենսաթոշակային վճարների հաշվին սահմանված կարգով ստացվող հատուցումների (այդ թվում՝ կենսաթոշակները),
- 4) [2.4] տողում լրացվում են բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու՝ այն մասով, որ մասով այդ գումարները, ապահովագրության պայմանագրի համաձայն, բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվում են վարկառու կամ գրավառու ֆիզիկական անձին կամ ուղղվում են վարկառու ֆիզիկական անձի վարկի մարմանը,
- 5) [2.5] տողում լրացվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կուտակային կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում ֆիզիկական անձի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող լրացուցիչ միջոցները,
- 6) [2.6] տողում լրացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակներում ստացվող պատվովճարները, դրամական օգնություններն ու օժանդակությունները,
- 7) [2.7] տողում լրացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստացվող ալիմենտները (ապրուստավճարները),
- 8) [2.8] տողում լրացվում են այդուր և կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ստացվող եկամուտները,
- 9) [2.9] տողում լրացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմաների (չափերի) սահմաններում աշխատանքային և կամավոր աշխատանքի մասին պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման հետ կապված աշխատողների (կամավորների) ստացված փոխհատուցման վճարները (այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների փոխհատուցման վճարները), բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարները,
- 10) [2.10] տողում լրացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվության կարգով ստացվող գույքի,
- 11) [2.11] տողում լրացվում են ոչ առևտրային կազմակերպություններից, Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման

մարմինների, օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների որոշումների հիման վրա, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային, միջպետական (միջկառավարական) կազմակերպություններից անհատույց ստացված ակտիվները, աշխատանքները, ծառայությունները, սույն կետում նշված մարմինների ու միջազգային, միջպետական (միջկառավարական) կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց համար (օգտին) կատարված վճարումները, այլ անձանցից անհատույց ստացված եկամուտները, օգնությունները:

12) [2.12] տողում լրացվում են ֆիզիկական անձի կողմից գույքի օտարումից ստացված նվազեցվող եկամուտները: Մասնավորապես, սույն կետում լրացվում են՝

ա. գույքի օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող այլ ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի կառուցապատող համարվող (համարված) ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց) կամ այլ տարածքների (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) օտարումից ստացվող եկամուտները,

բ. պետության կամ համայնքների կարիքների համար «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության միջոցի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի կառուցապատող համարվող (համարված) ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց) կամ այլ տարածքների (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) օտարումից ստացվող եկամուտները,

գ. հողամասի (անկախ հողամասի նպատակային նշանակությունից) օտարումից ստացվող եկամուտները,

դ. առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներում) վաճառասեղանների կամ վաճառակետների միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առջ ու վաճառքի գործունեություն իրականացնող հարկային գործակալին օտարվող ոսկու և թանկարժեք քարերի դիմաց ստացվող եկամուտները,

ե. սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) օտարումից ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) ձեռքբերման թրեյդ-ին առևտրի իրականացման լիցենզիա ունեցող՝ ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունից ստացվող եկամուտները,.

զ. սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի օտարումից բանկերից և վարկային կազմակերպություններից ստացվող եկամուտները, եթե հետադարձվում այդ գույքը նույն բանկի կամ վարկային կազմակերպության կողմից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց տրամադրվում է լիցենզով (տարատեսակներով):

13) [2.13] տողում լրացվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, ասպիրանտների, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողների, հոգևոր ուսումնական հաստատությունների ուսկնդիների՝ պետությունից ստացվող կրթաթոշակները, ինչպես նաև այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ ոչ առևտրային կազմակերպությունները կամ օտարերկրյա պետությունները, միջազգային, միջպետական (միջկառավարական) կազմակերպությունները:

14) [2.14] տողում լրացվում են այն գումարները, որոնք օրենքով սահմանված կարգով ստացվում են որպես պատճառված վնասի փոխհատուցում, բացառությամբ բաց թողնված եկամտի փոխհատուցման գումարների:

15) [2.15] տողում լրացվում են ստացվող վարկերի և փոխառությունների գումարները, բացառությամբ պարտատիրոջ կողմից վարկի կամ փոխառության գումարների գիշման կամ որևէ այլ ձևով այդ գումարները չվերադարձնելու մասին պարտատիրոջ հետ համաձայնության դեպքերի (այդ թվում՝ օրենքով սահմանված հայցային վարչմուտքի ժամկետը լրանալու պահին):

16) [2.16] տողում լրացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող՝ գովազդային վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները՝ յուրաքանչյուր շահման դեպքում 50 հազար դրամը չգերազանցող չափով, խաղարկությունով, ոչ խաղարկությունով և համակցված վիճակախաղերի, ինչպես նաև տոտալիզատորի մասնակիցների դրամական և իրային շահումները կամ խաղատներում, շահումով և սխալումով (կամ) ինտերնետ շահումով խաղերում ստացված շահումները,

17) [2.17] տողում լրացվում է մարդկանցում ստացվող դրամական և իրային մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում 50 հազար դրամը չգերազանցող չափով:

18) [2.18] տողում լրացվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամից հատուցվող գումարները, բացառությամբ ավանդի գումարին հաշվեգրվող և հատուցվող տոկոսները:

19) [2.19] տողում լրացվում են հՆՀՄ խնայքների ՀՆՀՄ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցվող գումարները:

20) [2.20] տողում լրացվում են միասնական հաշվին առկա գումարների վերադարձն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 327-րդ հոդվածով սահմանված ժամկետից 30 օրվանից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացված օրվա համար ֆիզիկական անձի օգտին հաշվեգրվող տույժերը:

21) [2.21] տողում լրացվում են «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելու գործունեությունից ստացվող եկամուտները:

22) [2.22] տողում լրացվում են վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից ստացվող հատուցման գումարները, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները:

23) [2.23] տողում լրացվում են գյուղատնտեսական արտադրանք արտադրող ֆիզիկական անձանց՝ գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումից (իրացումից) ստացվող եկամուտները:

24) [2.24] տողում լրացվում են արժեթղթերից ստացվող նվազեցվող եկամուտները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 149-րդ հոդվածի:

25) [2.25] տողում լրացվում են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ֆիզիկական անձանց վճարվող հատուցման գումարները:

26) [2.26] տողում լրացվում են սույն բաժնի [2.1]-ից [2.25] տողերում չնշված՝ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այլ նվազեցվող եկամուտները:

27) [2.27] տողում լրացվում են հաշվետու հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձանց ստացված նվազեցվող եկամուտների հանրագումարը:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ ԴՆԱՂԻՄԱՑՈՂՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ (ՍՏԱՑՎԱԾ) ԵԿԱՄՈՒՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՑԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՉՎԱՐԿ

Եկամտի տեսակ		Եկամուտ (դրամ) [3.1]	Դրույքաչափ [3.2]	Եկամտային հարկ (դրամ) [3.3]
1. Եկամուտներ և եկամտային հարկ, այդ թվում՝				
1) աշխատանքային ապամանագրի շրջանակներում եկամուտ	[3.4]		x	x
2) քաղաքացիաիրավական ապամանագրով աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) դիմաց եկամուտ	[3.5]		x	x
3) հարկման բազայի նվազեցման գումար (կամավոր կենսաթոշակային վճարների գումար)	[3.6]	()	x	x
4) հարկվող եկամուտ	[3.7]		20%	
5) ռոյալթի	[3.8]		10%	
6) տոկոս	[3.9]		20% (10%)	
7) վարձավճար	[3.10]		10%	
8) վարձավճարի 60 մլն դրամը գերազանցող գումար	[3.11]		10%	
9) շահաբաժին	[3.12]		5%(10%)	
10) գույքի (բացառությամբ սույն կետի 11-րդ ենթակետում նշված) օտարման դիմաց եկամուտ	[3.13]		10%	
11) կառուցապատողի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարումից եկամուտ	[3.14]		20%	
12) կանոնադրական	[3.15]		10%	

կամ կապիտալում մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարման դիմաց	[3.16]		20%	
14) նվիրատվություն	[3.17]		20%	
15) եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածում չվճարված պասիվ եկամուտներ	[3.18]		5% (10%, 20%)	
16) այլ եկամուտներ	[3.19]		20%	
2. Ընդամենը հաշվարկված եկամտային հարկ	[3.20]	x	x	
3. Այլ պետություններում վճարված հարկի գումար	[3.21]	x	x	
4. Այլ պետություններում վճարված հարկի գումարի հաշվանցվող (նվազեցվող) մաս	[3.22]	x	x	()
5. Պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկ	[3.23]	x	x	

7. Հաշվարկի (հայտարարագրի) 3-րդ բաժնում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում հարկային գործակալ չհանդիսացողներից (բացառությամբ տող [3.11]-ի) ստացվող (ստացված) եկամուտները և այդ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկը:
8. Հաշվարկի (հայտարարագրի) [3.1] սյունակում լրացվում են՝
- 1) հարկային գործակալ չհանդիսացողներից աշխատանքային պայմանագրի շրջանակներում ստացվող (ստացված) եկամուտը (տող [3.4]),
 - 2) հարկային գործակալ չհանդիսացողներից քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) դիմաց ստացված եկամուտը (տող [3.5]),
 - 3) հարկման բազայից նվազեցվող կամավոր կենսաթոշակային վճարների նվազեցվող գումարը ((տող [3.4] + տող [3.5]) - (([3.4] + [3.5]) / 1,05) (տող [3.6]),
 - 4) աշխատանքային և ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում հարկային գործակալ չհանդիսացողներից ստացվող (ստացված) հարկվող եկամուտը (տող [3.4] + տող [3.5]) + տող [3.6]) (տող [3.7]),
 - 5) ռոյալթի (տող [3.8]),
 - 6) տոկոսը (տող [3.9]),
 - 7) վարձավճարը (տող [3.10]),
 - 8) հարկային տարվա ընթացքում ստացված (այդ թվում հարկային գործակալներից) վարձակալական վճարների հանրագումարի 60 միլիոն դրամը գերազանցող գումարը (տող [3.11]),
 - 9) շահաբաժինը (տող [3.12]),
 - 10) գույքի (բացառությամբ 1-ին կետի 11-րդ ենթակետում նշվածի) օտարման դիմաց եկամուտը (տող [3.13]),
 - 11) կառուցապատողի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարումից եկամուտը (տող [3.14]),
 - 12) կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց) ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից եկամուտները, եթե այդ օտարումը կատարվում է կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում այդ մասնակցությունը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը) ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվա կամ դրան հաջորդող երեք հարկային տարիների ընթացքում (տող [3.15]),
 - 13) մրցույթներում ստացվող դրամական և իրային մրցանակների՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում 50 հազար դրամը գերազանցող չափը (տող [3.16]),
 - 14) նվիրատվությամբ ստացվող գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները) (տող [3.17]),
 - 15) եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու հարկային տարվան հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածում չվճարված պասիվ եկամուտները (տող [3.18]),
 - 16) ստացվող (ստացված) այլ եկամուտները (տող [3.19]):
9. [3.2] սյունակում լրացվում են եկամտային հարկի դրույքաչափերը և [3.3] սյունակում լրացվում են [3.1] սյունակում նշված եկամուտների համար հաշվարկված եկամտային հարկի գումարները:
10. [3.20] տողում ինքնաշխատ լրացվում է հաշվետու հարկային տարվա համար հաշվարկված եկամտային հարկի գումարը, որը որոշվում է [3.1] սյունակում ներառված եկամուտների համար հաշվարկված եկամտային հարկի գումարների հանրագումարի չափով:
11. [3.21] և [3.22] տողերում լրացվում են այլ պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան պահված (զանձված) հարկը (օտարերկրյա պետության հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանքի հիման վրա) և հարկի այն գումարը, որի չափով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ենթակա է նվազեցման տարեկան եկամտային հարկը:
12. [3.23] տողում լրացվում է պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկը (տող [3.23]=տող [3.20]+տող [3.22]):

ԲԱԺԻՆ 4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Ուղղություններ		Ծախս (դրամ) [4.1]	Փոխհատուցման գումար (դրամ) [4.2]
1. Առողջապահություն	[4.3]	()	()
2. Կրթություն	[4.4]	()	()
3. Ընդամենը	[4.5]	()	()

13. Հաշվարկի (հայտարարագրի) 4-րդ բաժնում ինքնաշխատ լրացվում են հաշվետու տարվա ընթացքում ֆիզիկական անձի կողմից՝ իր և իր ընտանիքի անդամների համար կատարված և հարկային հաշիվներով կամ հաշիվ վավերագրերով հիմնավորված սոցիալական ծախսերը, ինչպես նաև այդ ծախսերի առավելագույն չափերը չգերազանցող՝ փոխհատուցման ենթակա գումարները: Ընդ որում, Հաշվարկի (հայտարարագրի)՝
- 1) [4.1] սյունակում ([4.3] և [4.4] տողեր) լրացվում են հաշվետու տարվա ընթացքում ֆիզիկական անձի կատարած սոցիալական ծախսերի գումարները՝ ըստ առանձին ուղղությունների: Մասնավորապես, առողջապահության գծով սոցիալական ծախսեր են համարվում Հայաստանի Հանրապետությունում գործող ապահովագրական ընկերություններից առողջության ապահովագրական փաթեթի ձեռքբերման ծախսերը, իսկ կրթության գծով սոցիալական ծախսեր են համարվում Հայաստանի Հանրապետությունում իրականացվող նախադպրոցական, տարրական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ), հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ), միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի մատով կատարված ուսման վճարները,
- 2) [4.2] սյունակում ([4.3] և [4.4] տողեր) լրացվում են սոցիալական ծախսերի փոխհատուցման ենթակա գումարները, որոնք չեն կարող գերազանցել Կառավարության սահմանած առավելագույն չափերը,
- 3) [4.5] տողի [4.2] սյունակում լրացվում է ֆիզիկական անձի՝ իր և իր ընտանիքի անդամների համար կատարված բոլոր ուղղություններով սոցիալական ծախսերի փոխհատուցման ենթակա գումարների հանրագումարը, որը չի կարող գերազանցել Կառավարության սահմանած առավելագույն չափը:

ԲԱԺԻՆ 5. ԿՃԱՐՄԱՆ ԿԱՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ՎԵՐԿԱՐԴՄԱՆ) ԵՆԹԱԿԱ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

		Եկամտային հարկ (դրամ) [5.1]
1. Հարկային գործակալից (գործատուից) ստացվող (ստացված) եկամուտներից հաշվարկված և վճարված եկամտային հարկ	[5.2]	
2. Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների գծով փոխհատուցված գումար	[5.3]	()
3. Ուսման վարձի գծով փոխհատուցված գումար	[5.4]	()
4. Կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում ներդրված շահաբաժնի գծով	[5.5]	()

փոխհատուցված գումար		
5. Հարկային գործակալի կողմից պահված եկամտային հարկի նվազեցման ենթակա գումար	[5.6]	
6. Տարեկան հաշվարկով (հայտարարագրով) վճարման ենթակա եկամտային հարկի և եկամտային հարկի նվազեցման ենթակա գումարի հանրագումար	[5.7]	
7. Սոցիալական ծախսերի փոխհատուցման գումար	[5.8]	()
8. Պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկ	[5.9]	
9. Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա եկամտային հարկ	[5.10]	

14. Հաշվարկի (հայտարարագրի) 5-րդ բաժնում ինքնաշխատ լրացվում են հաշվետու հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձանց վճարման կամ փոխհատուցման (վերադարձման) ենթակա եկամտային հարկի հաշվարկը: Ընդ որում, սույն բաժնի՝

1) [5.2] տողում լրացվում է ֆիզիկական անձի՝ հարկային գործակալից (գործատուից) ստացվող (ստացված) եկամուտներից հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները (տող [1.1.11] + տող [1.2.17]),

2) [5.3] տողում լրացվում է բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով ֆիզիկական անձի ստացած հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների փոխհատուցման նպատակով ֆիզիկական անձի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված և վճարված եկամտային հարկի վերադարձված գումարները,

3) [5.4] տողում լրացվում է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ Կառավարության հաստատած մասնագիտություններով առկա ուսուցմամբ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում և օրդինատուրայում սովորող (ուսանող) վարձու աշխատողի ուսման վարձը փոխհատուցված (եկամտային հարկի վերադարձված) գումարը,

4) [5.5] տողում լրացվում է ֆիզիկական անձի՝ կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում ներդրված շահաբաժնի գծով փոխհատուցված (եկամտային հարկի վերադարձված) գումարը,

5) [5.6] տողում լրացվում է հարկային գործակալից (գործատուից) ստացվող (ստացված) եկամուտներից հաշվարկված և վճարված եկամտային հարկի նվազեցման ենթակա գումարը ([5.2] - [5.3] - [5.4] - [5.5]),

6) [5.7] տողում լրացվում է հաշվարկված և պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի և հարկային գործակալի կողմից պահված եկամտային հարկի նվազեցման ենթակա գումարի հանրագումարը ([3.23] տող + [5.6] տող),

7) [5.8] տողում լրացվում է ֆիզիկական անձի կատարած սոցիալական ծախսերի փոխհատուցման գումարը՝ հաշվի առած Կառավարության սահմանած առավելագույն չափը (բաժնի 4-ի [4.5] տողի [4.2] սյունակ),

8) [5.9] տողում լրացվում է պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարը ([5.7] տող - [5.8] տող - [5.6] տող, եթե այն > 0-ից),

9) [5.10] տողում լրացվում է պետական բյուջեից փոխհատուցման ենթակա եկամտային հարկի գումարը ([5.7] տող - [5.8] տող - [5.6] տող, եթե այն < 0-ից): Ընդ որում, [5.10] տողի արժեքը չի կարող գերազանցել [5.6] տողի արժեքը:

(14-րդ կետը խմբ. 23.09.24 N 1211-Ն)

ԲԱԺԻՆ 6. ԻՆՔՆԱԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱԾՎԱՐԿ

1. Ինքնազբաղվածությունից եկամուտ (դրամ)	[6.1]	
2. Ինքնազբաղվածությունից ստացված եկամտից սոցիալական վճարի դրույքաչափ	[6.2]	5%
3. Ինքնազբաղվածությունից ստացված եկամտի գծով սոցիալական վճար (դրամ)	[6.3]	

15. Հաշվարկի (հայտարարագրի) 6-րդ բաժնում լրացվում են ֆիզիկական անձի ինքնազբաղվածությունից ստացված եկամուտներից սոցիալական վճարի հաշվարկը:

16. [6.1] տողում լրացվում է ֆիզիկական անձի՝ որպես ինքնազբաղված անձ ստացված եկամտի գումարը, [6.2] տողում լրացվում է ինքնազբաղվածությունից ստացված եկամտի գծով սոցիալական վճարի դրույքաչափը (5%) և [6.3] տողում լրացվում է ֆիզիկական անձի՝ որպես ինքնազբաղված անձ ստացված եկամտից հաշվարկված սոցիալական վճարի գումարը ([6.1] x [6.2]):

ԲԱԺԻՆ 7. ՀԱԾՎԱՐԿԻ (ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ) ԲԱԺԻՆ 1-ՈՒՄ ԻՆՔՆԱԾԻՍԸ ԼՐԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ 1. Աշխատանքային պայմանագրերի, ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացվող (ստացված) եկամուտներ և եկամտային հարկ

Եկամտի տեսակ		Հարկային գործակալի (գործատուի)		Ստացվող (ստացված) եկամուտ (դրամ) [7.1.3]	Եկամտային հարկ (դրամ) [7.1.4]
		ՀՎՀՀ [7.1.1]	Անվանում [7.1.2]		
1. Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	[7.1.5]				x
2. Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի (ծառայության) դիմաց վարձատրություն	[7.1.6]				x
3. Ժամանակավոր անաշխատունակության, մայրության նպաստներ	[7.1.7]				x
4. Աշխատողի այլ եկամուտներ	[7.1.8]				x
5. Աշխատողի հարկման բազայի նվազեցման գումար (կամավոր կենսաթոշակային վճարների գումար)	[7.1.9]			()	x
6. Հարկվող եկամուտ	[7.1.10]				
7. Ընդամենը	[7.1.11]	x	x	x	

17. Հայտարարատու հանդիսացող ֆիզիկական անձի կողմից Հաշվարկի (հայտարարագրի) 1-ին բաժնի 1-ին գլխում ինքնաշխատ լրացված տվյալների վերաբերյալ այլ տեղեկատվության առկայության դեպքում, ֆիզիկական անձը կատարում է համապատասխան նշում և Հաշվարկի (հայտարարագրի) 7-րդ բաժնի 1-ին գլխի համապատասխան տողում լրացնում է տեղեկատվությունը:

Գլուխ 2. Այլ եկամուտներ և եկամտային հարկ

Եկամտի տեսակ		Հարկային գործակալի		Ստացված եկամուտ (դրամ) [7.2.3]	Եկամտային հարկ (դրամ) [7.2.4]
		ՀՎՀՀ [7.2.1]	Անվանում [7.2.2]		
1. Ռոյալթի	[7.2.5]				
2. Տոկոս	[7.2.6]				
3. Վարձավճար	[7.2.7]				
4. Ծախսերի	[7.2.8]				
5. Նվիրատվություն	[7.2.9]				
6. Գույքի (բացառությամբ սույն գլխի 7-րդ կետում նշված) օտարումից եկամուտ	[7.2.10]				
7.	[7.2.11]				

Եկամտի կողմի արդյունակ				
Եկամտի տեսակ	Եկամտի կող	Դրույքաչափ	Եկամտի կող	Դրույքաչափ
	ՀՀ քաղաքացի		Օտարերկրացի	
1. Ռոյալթի	001	10%	101	10%
2. Տոկոս	002	10%	102	10%
3. Շահում	003	ընդհանուր սահմանված դրույքաչափ	103	ընդհանուր սահմանված դրույքաչափ
4. Մրցանակ	004	ընդհանուր սահմանված դրույքաչափ	104	ընդհանուր սահմանված դրույքաչափ
5. Նվիրատվություն	005	ընդհանուր սահմանված դրույքաչափ	105	ընդհանուր սահմանված դրույքաչափ
6. (կեսն ուժը կորցրել է 17.09.19 N 604-Ն)				
7. Գույքն (բացառությամբ սույն արդյունակի 6-րդ և 8-րդ տողերում նշված) օտարերկր ղիմաց Եկամուտ	007	10%	107	10%
8. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող	008	20%	108	20%

[illegible]

Տեղեկանքը տրամադրվում է ֆիզիկական անձի պահանջով (մասնավորապես, հարկային մարմին ներկայացնելու համար):

6. [8] տողում նշվում է հաշվարկված (վճարված) եկամտի տեսակը՝ ըստ ստորև բերված կողերի դասակարգման: Հարկային տարվա ընթացքում նույն ֆիզիկական անձին նույնամասն դրույքաչափերով հարկված մի քանի տեսակի եկամուտներ հաշվարկվելու (վճարվելու) դեպքում ներկայացվում է առանձին տեղեկանք՝ նշելով հաշվարկված (վճարված) եկամուտների համապատասխան կողերը:

(6-րդ կետը փոփ. 17.09.19 N 604-Լ)

Եկամտի տեսակ	Եկամտի կոդ	Դրույքաչափ	Եկամտի կոդ	Դրույքաչափ
	ՀՀ քաղաքացի		Օտարերկրացի	
1. Ռոյալթի	001	10%	101	10%
2. Տոկոս	002	10%	102	10%
3. Շահույժ	003	ընդհանուր սահմանված դրույքաչափ	103	ընդհանուր սահմանված դրույքաչափ
4. Մրցանակ	004	ընդհանուր սահմանված դրույքաչափ	104	ընդհանուր սահմանված դրույքաչափ
5. Նվիրատվություն	005	ընդհանուր սահմանված դրույքաչափ	105	ընդհանուր սահմանված դրույքաչափ
6. (կետն ուժը կորցրել է 17.09.19 N 604-Լ)				
7. Գույքն (բացառությամբ սույն աղյուսակի 6-րդ և 8-րդ տողերում նշվածի) օտարելու դիմաց եկամուտ	007	10%	107	10%
8. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող կառուցապատող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարումից ստացված եկամուտ	008	20%	108	20%
9. Վարձավճար	009	10%	109	5%(10%)
10. Շահաբաժիններ	010	5%	110	10%
11. Ֆիզիկական անձի համար ապահովագրավճար	011	ընդհանուր սահմանված դրույքաչափ	111	ընդհանուր սահմանված դրույքաչափ
12. Կամավոր կենսաթոշակներ	012	10%	112	10%
13. ՀՀ-ում կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի աշխատանքային պայմանագրով աշխատանքի կատարման դիմաց հաշվարկված եկամուտ	x	x	115	ընդհանուր սահմանված դրույքաչափ
14. ՀՀ-ում կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) դիմաց վճարված եկամուտ	x	x	116	ընդհանուր սահմանված դրույքաչափ
15. Աշխատանքային պայմանագրով աշխատանքի կատարման դիմաց ՀՀ քաղաքացուն կամ ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացուն հաշվարկված եկամուտ	017	ընդհանուր սահմանված դրույքաչափ	117	ընդհանուր սահմանված դրույքաչափ
16. Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) դիմաց ՀՀ քաղաքացուն կամ ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացուն վճարված եկամուտ	018	ընդհանուր սահմանված դրույքաչափ	118	ընդհանուր սահմանված դրույքաչափ
17. Այլ եկամուտներ	099	ընդհանուր սահմանված դրույքաչափ	199	ընդհանուր սահմանված դրույքաչափ

(աղյուսակը փոփ. 17.09.19 N 604-Լ)

7. [9] տողում նշվում են եկամուտների հաշվարկման (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով)՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում եկամուտների վճարման) ամիսները

8. [10] տողում նշվում է հաշվարկված (փաստացի վճարված) եկամուտների հաշվարկային մեծությունը

9. [11] տողում նշվում է հարկման բազայից նվազեցված կամավոր կենսաթոշակային վճարների հանրագումարը

10. [12] տողում նշվում է [10] տողում նշված եկամուտներից պահված եկամտային հարկի հանրագումարը

11. [13] տողում նշվում է [10] տողում նշված եկամուտներից պահված սոցիալական վճարի հանրագումարը

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր, նոտար)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Հաշվապահ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Թղթային կրիչով տրամադրված տեղեկանքը լրացվում է 2 օրինակից, որից մեկը տրվում է ֆիզիկական անձին, իսկ մյուսը՝ ֆիզիկական անձի ստորագրությամբ մտնում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) մոտ:

(հավելվածը լրաց. 18.12.17 N 425-Լ, փոփ. 17.09.19 N 604-Լ)